«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Խմբային քննարկումների ազդեցությունը սովորողների լեզվամտածողության և սոցիալական ունակությունների զարգացման վրա

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Գասպարյան
Արմավիրի մարզի Մյասնիկյանի Արայի անվան Միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Ա. Անտոնյան

ԱՐՄԱՎԻՐ 2022

Բովանդակություն

Բովանդակություն……2
Ներածություն……3
Գրական ակնարկ……5
Ինչպես իրականացնել արդյունավետ խմբային աշխատանք……6
Խմբերի ձևավորում ըստ աշակերտների հետաքրքրությունների……7
Տարբերակումն ըստ կարողությունների……8
Դասարանի բաժանումը խմբերի……8
Ընտրություն նախապես կազմած ցուցակով……9
Խմբերում ընդգրկված աշակերտների թվի նշանակությունը……9
Միատարր և բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի ձևավորման մոտեցումները.9
Խմբեր կազմելու եղանակները……10
Կենտրոններով աշխատանք……10
Խմբային աշխատանքի օրինակ……12
Եզրակացություն……15
Օգտագործված գրականության ցանկ ……17

Ներածություն

Մեր լեզուն բարձր լեռներից և խորունկ ձորերից ծնված լեզու է՝ բարձունքների ու խորությունների լեզու:

Ավետիք Իսահակյան

Գիտության զարգացումը մեզ լայն հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը, ինչի կարիք ունի աշակերտը և ինչպես կարելի է կազմակերպել արդյունավետ դաս, որը կնպաստի համակողմանի զարգացած անձ ձևավորելուն, հնարավորություն է տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ, կատարել կոնկրետ հանձնարարություններ, քննարկումներ, կայացնել որոշումներ, որոնք էլ նպաստում են սովորողի մեջ այնպիսի կարողությունների զարգացմանը, ինչպիսիք են՝ ճանաչողությունը, ինքնուրույն գործունեությունը, համագործակցությունը: Խթանում է հետաքրքրասիրությունը, ստեղծարարությունը, նպաստում է տարբեր իրավիճակներում կողմնորոշվելուն, լուծումներ տալուն և ներկայացնելուն:

Այս պայմաններում կարևոր է հանրակրթության դերի վերաիմաստավորումը: Կրթական փոփոխությունները, զարգացման ուղղություններն ու տեմպերը մանկավարժներից պահանջում են դասապրոցեսի կազմակերպման նոր ձևեր:

Կրթության կազմակերպման խնդիրներից են կրթական համայնքի ստեղծումը, սոցիալապես ակտիվ, ինքնակազմակերպվող խմբի համակեցությունը: Այդ խնդիրների լուծման լավագույն ճանապարհը խմբային քննարկումներն են է, որտեղ դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու, հարգելու , ապրումակցելու:

Խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը։Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա։ Խմբային աշխատանքը խթանում է սովորողների համատեղ մտավոր աշխատանքը,որի ժամանակ քննարկումները դառնում են ուսուցման միջոց։

Խմբային քննարկումները մեծապես նպաստում են աշակերտների լեզվամտածողության և սոցիալական ունակությունների զարգացման վրա։ Քանի որ տարբեր լեզուներ ունեն լեզվական (այդ թվում հատկապես քերականական) արտահայտության տարբեր միջոցներ, բնականաբար, այդ լեզվով խոսողների լեզվական մտածողությունը որոշակիորեն տարբերվում է։ Խմբային քննարկումների ժամանակ աշակերտները մտքերն արտահայտում են ավելի ազատ,անկաշկանդ, քանի որ այդ պահին իրենք են իրենց ուսուցիչը։ Նրանք կարողանում են մշակել իրենց նյութը, փորձում են հասկանալ ինքնուրույն։ Այնքանով է նպատում լեզվամտածողության վրա, որ նյութը աշակերտը ընթերցում է, հասկանում, վերարտադրում իր ընկերների մոտ։ Սկզբում տեքստի հիմնական իմաստը վերարտադրում է իր բառերով, իսկ այնուհետև արտահայտում է նյութի իմաստը՝ պահպանելով ուղղախոսության կանոնները։

Խմբային քննարկումների արդյունքում զարգանում է աշակերտների սոցիալական ունակությունները։ Զարգանում է սովորողի՝ սոցիալական միջավայրի պայմաններին հարմարվելու ունակությունը։ Հարմարվողությունը սոցիալական գործընթացը պայմանավորող գործոններից մեկն է։ Սովորողը կարողանում է հարմարվել նոր ու փոփոխվող միջավայրին, կատարում է համատեղ աշխատանք խմբի բոլոր անդամների հետ։ Այդ խմբում հստակ գիտակցում է իր տեղն ու դերը, կարևորում է իր անձի նշանակությունը։ Խմբային քննարկումների արդյունքում բարձրանում է նաև անձի ինքնագնահատականը։

Գրական ակնարկ

Այս աշխատանքում կներկայացնեմ, թե ինչին կարող է խթանել խմբային աշխատանքը,ինչպես են ձևավորվում խմբերը ըստ աշակերտների հետաքրքրությունների, ինչպես դասարանը բաժանել խմբերի, խմբում ներգրավված աշակերտների թվի նշանակությունը, տարբեր մեթոդների տիրապետելու նշանակությունը, խմբեր կազմելու եղանակները, խմբային աշխատանքի առավելությունները:

Ալեքս Ասբորնը նկարագրում է լեզվամտածողությանը նպաստող իր մեթոդիկան, որը տեղ է գտել «Ի՞նչպես հորինել» գրքում 1942 թ-ին: Խնդիրների լուծման օպերատիվ տարբերակներից մեկն է, որը հիմնված է ստեղծագործական գաղափարների հավաքագրման վրա, որի ընթացքում մասնակիցներին տրվում է հնարավորինս շատ լուծումների տարբերակներ:

Դելֆյան մեթոդի միջոցով իրականացվող վերլուծությունը անց է կացվում մի քանի փուլով, արդյունքները մշակվում են վիճակագրական մեթոդների միջոցով: Մեթոդի հիմնային սկզբունքը հետևյալում է՝ անկախ փորձագետների մի խումբ, ովքեր հաճախ չեն ճանաչում մեկը մյուսին, ավելի արդյունավետ են գնահատում ու կանխատեսում են արդյունքները, քան՝ մասնագիտական խմբերը: Թույլ է տալիս խուսափել հակառակ տեսակետներ ունեցող մասնագետների միմյանց հետ բախումից:

Դելֆի

Առաջարկել է ստեղծագործելու և մտածողության բազմաթիվ մեթոդիկաներ: Նա հանդիսանում է լատալ մտածողության հեղինակը, որը տարբերվում է սովորական հորիզոնական մտածողության ձևերի վրա հիմնված մեթոդիկաներից նրանով, որ հարցականի տակ է դնում ելքային պայմանները: Լատալ մտածողության տեսակներից մեկն է վեց գլխարկների մեթոդիկան (սպիտակ՝ վերլուծական մտածողություն,

կարմիր՝ զգացմունքային մտածողություն, սև՝ քննադատական մտածողություն, դեղին՝ լավատեսական մտածողություն, կանաչ՝ ստեղծագործական մտածողություն, կապույտ՝ լայնածավալ մտածողություն)։

Էդուարդ դը Բոնո

Սոցիալական հարմարվողականության կարևոր բաղադրիչներն են՝ անձի գնահատականների, հավակնությունների, անձնական հնարավորությունների համաձայնեցում սոցիալական միջավայրի առանձնահատկության հետ, նրա նպատակների, արժեքների, կողմնորոշումների համաձայնեցումը կոնկրետ սոցիալական միջավայրում դրանք իրագործելու ընդունակության հետ։

Սոցիալական հարմարվողականության տեսակներից մեկը սոցիալ-հոգեբանական հարմարվողությունն է, այսինքն՝ անձի և սոցիալական միջավայրի այնպիսի փոխազդեցությունը, որը հանգեցնում է անձի և խմբի նպատակների ու արժեքների լավագույն հարաբերակցության։

Աշխատանքի ավարտից հետո կներկայացվի եզրակացություն և գրականության ցանկ։

Ինչպես իրականացնել արդյունավետ խմբային աշխատանք

Խմբային աշխատանքի արդյունավետ իրականացման համար պետք է խմբերը ձևավորել ըստ աշակերտների ընդունակությունների, հետաքրքրությունների։ Խմբում աշխատելիս յուրաքանչյուրը հստակ պետք է գիտակցի իր դերը, ունենա պատասխանատվության զգացում։

Յուրաքանչյուր դասարան խմբերի բաժանելիս պետք է գտնել առավել հարմար եղանակ։ Աշակերտներին միշտ պետք է հիշեցնել ժամանակի մասին և այն, որ դերերի բաշխումը կատարեն ճիշտ և խմբի յուրաքանչյուր անդամ իմանա իր անելիքը։

Դասավանդողը ինքը պիտի տիրապետի այդ կարողություններին, դառնա խմբի անդամներից մեկը, իր սաների հետ ստեղծի սոցիալական այնպիսի միջավայր,որ հետաքրքրի սովորողներին և խթանի նրանց ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, հետազոտելու ու ստեղծագործելու կարողությունը: Խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը:Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա:

Դասավանդողը ինքը պիտի տիրապետի այդ կարողություններին, դառնա խմբի անդամներից մեկը, իր սաների հետ ստեղծի սոցիալական այնպիսի միջավայր, որ հետաքրքրի սովորողներին և խթանի նրանց ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, հետազոտելու ու ստեղծագործելու կարողությունը:

Խմբերի ձևավորում ըստ աշակերտների հետաքրքրությունների: Խմբերում պետք է ունենան միատարր կառուցվածք, միևնույն խմբի մեջ ներառված աշակերտներին պետք է տրվի նույն առաջադրանքը: Պարտադիր չէ, որ խմբի անդամները համագործակցեն միմյանց հետ, տրված առաջադրանքները նրանք կարող են կատարել ինքնուրույն, իրարց անկախ: Նման դեպքերում հնարավոր է ստեղծել ավելի մեծ խմբեր: Այնուհանդերձ,եթե առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է, որ խմբի անդամները համագործակցեն միմյանց հետ, ապա խմբում պետք է ընդգրկված լինի ոչ ավելի, քան 3-5 աշակերտ:Խմբերի ձևավորման այս եղանակը հատկապես հարմար է շնորհալի երեխաների հետ աշխատանքի համար կամ այնպիսի իրավիճակներում,երբ անհրաժեշտ է, որ որոշ աշակերտներ առաջադիմության առումով հետ չմնան իրենց դասընկերներից:

Տարբերակումն ըստ կարողությունների: Այս դեպքում երեխաները բաժանվում են խմբերի ըստ իրենց ընդունակությունների: Քանի որ խմբերի անդամներն ինքնուրույն են աշխատում,անհրաժեշտություն չկա ստեղծելու փոքր (3-5 անդամից բաղկացած)

խմբեր։Յուրաքանչյուր աշակերտ իր առաջադրանքը կատարում է ինքնուրույն, մասամբ անհատական մոտեցմամբ։

Դասարանի բաժանումը խմբերի

Դասարանը խմբերի բաժանելու ձևերից են՝

- Հաշվելով (օրինակ՝ եթե դասարանը պետք է 4 խմբի բաժանվի,կանգնում են շրջանով և հաշվում են 1-4, որից հետո հանձնարարվում է 1-երին մեկ խումբ կազմել,2-երին մյուս խումբ և այլն)։
- Քարտերի եղանակով խմբերի բաժանվելիս կարելի է քարտերի փոխարեն օգտագործել անհրաժեշտ խմբերի թվով գունավոր քարտեր (օրինակ՝ եթե դասարանը 3 խմբի է բաժանվելու, պետք է պատրաստել երեխաների թվով,սակայն 3 գույնի քարտեր՝ հավասար թվով)։Քարտերի փոխարեն կարելի է օգտագործել կտրտված բացիկներ՝ երեխաները պետք է գտնեն իրենց բացիկի կտորներն ունեցողներին և խմբվեն նրանց մոտ։
- Ըստ նմանությունների և տարբերությունների (օրինակ՝ ըստ ծնված եղանակի, ըստ սիրած սպորտաձևի, ըստ հագուստի գույնի և այլն),եթե խմբերի քանակն ու խմբերում անհատների քանակը էական չէ։
- Ուսուցչի ընտրությամբ խմբերը, եթե յուրաքանչյուր խմբում տարբեր ընդունակություններ ունեցող աշակերտներ են, կամ խմբում աղջիկների և տղաների հավասար քանակ է պետք։

Խմբերի բաժանման ձևերն են՝ գունավոր քարտեր, երգերով, հաշվով, կտրտված նկարներով, վիճակահանությամբ, նախասիրությամբ, ծաղիկների թերթեր, երկրաչափական պատկերներ, ծննդյան օրեր, ձնագնդիկ։

Ընտրություն նախապես կազմած ցուցակով։ Ուսուցիչը նախօրոք կազմում է աշակերտների ցուցակն այնպես, որ առաջին տեղում լինի ամենաուժեղ աշակերտը,

երկրորդում՝ նրան հավասար կամ մի փոքր ավելի թույլը և այսպես,նվազման կարգով շարունակում է՝ ցուցակի վերջում նշելով ամենաթույլ աշակերտի անունը։

Խմբի կազմում ընդգրկում է առաջինին և վերջինին,ինչպես նաև երկու հոգու՝ ցուցակի մեջտեղից։ Եթե տղաների ու աղջիկների հարաբերությունը պահպանված չէ՝ կարելի է փոխարինել՝ օգտվելով ցուցակի միջին մասի անուններից։Անհրաժեշտ է համոզվել, որ խմբում չեն ընդգրկվել անհամատեղելի աշակերտներ կամ անբաժանելի ընկերներ։Եթե կարիք կա՝ փոխարինել։ Խումբը կազմված է։ Եթե որոշ աշակերտներ դուրս են մնացել՝ տեղավորել նրանց արդեն կազմված խմբերում՝ հաշվի առնելով վերը հիշատակված սկզբունքները։

Խմբային աշխատանքը թելադրում է աշխատանքային տեղերի ոչ ստանդարտ դասավորվածություն։ Տարբերակները բազմազան են, սակայն խորհուրդ է տրվում պահպանել հետևյալ սկզբունքները.

- Ոչ ոք չպետք է նստի մեջքով դեպի գրատախտակը։ Յուրաքանչյուրին պետք է տեսանելի լինի դասարանի կենտրոնական մասը՝ գրատախտակը։
- Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է կարողանա տեսնել իր խմբի բոլոր անդամներին։

Խմբերում ընդգրկված աշակերտների թվի նշանակությունը։ Ամենափոքր խմբում պետք է ընդգրկած լինի առնվազն 3 աշակերտ, քանի որ դրանից պակաս լինելու դեպքում աշխատանքը խմբում դառնում է զույգերով կամ անհատական։ Լավագույն տարբերակն այն է, երբ խնբում ընդգրկված է 4 աշակերտ, այս դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է ունենալ իր ենթաառաջադրանքը և , ավելին, անհրաժեշտության դեպքում խմբի անդամներին կարելի է հեշտությամբ բաժանել զույգերի։ Վեցից ավելի աշակերտներից բաղկացած խմբերը դժվար է կառավարել, քանի որ որոշ աշակերտներ կարող են չմասնակցել խմբի աշխատանքներին և նույնիսկ խանգարել մյուսներին։

Միատարր և բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի ձևավորման մոտեցումները։ Միատարր կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունն այն է, որ տվյալ առարկայում աշակերտների ընդունակություններն ու հետաքրքրությունները գրեթե նույնն են։

Բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունն այն է, որ տվյալ առարկայում աշակերտների ընդունակություններն ու հետաքրքրություններն ակնհայտ տարբեր են: Վերջին դեպքում կարող է օգտակար լինել դերերի բաշխումը՝ ապահովելու,որ յուրաքանչյուր անդամ, իր ընդունակությունների սահմաններում, ներգրավվի խմբի աշխատանքներում: Նման խմբային աշխատանքն ապացուցում է այն տեսությունը, որ աշակերտները կարող են շատ արդյունավետ կերպով սովորել միմյանցից:

Խմբեր կազմելու եղանակները

Խումբը կարող է ձևավորվել պատահականության սկզբունքով, աշակերտների ցանկությամբ կամ էլ ուսուցչի կողմից՝ միտումնավոր կերպով: Խմբեր կազմելու ինքնակամ և համակարգված եղանակներին կարելի է դիմել կախված հետապնդվող նպատակներից:

Առավել արդյունավետ է խմբվելու համակարգված եղանակներից օգտվելը: Այն բոլոր երեխաներին միմյանց հետ շփվելու հնարավորություն է ընձեռում, աշակերտները սովորում են փոխհարաբերվել բոլորի , այլ ոչ միայն մտերիմների հետ: Դասարանում մթնոլորտն ավելի արագ է ջերմանում: Սակայն շատ հաճախ էլ իմաստ չունի փոփոխել խմբերը: Դա կարող է միմյանց հետ, գնալով ավելի արդյունավետ աշխատել սովորող խմբի գործունեությունը խափանել: Նման խմբերը կարելի է մի քանի շաբաթ չբաժանել: Խմբերը բաժանելուց և նոր խմբեր կազմելուց առաջ աշակերտներին հանձնարարել գնահատանքի խոսքեր հասցեագրել ընկերներին:

Կենտրոններով աշխատանք: Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով:

Կենտրոններ.

- Հետազոտողների կենտրոն
- Ստեղծագործողների կենտրոն
- Գրավոր աշխատանքի կենտրոն
- Բացահայտողների կենտրոն

Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները։

Բացահայտողների կենտրոն։ Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին։

Հետազոտողների կենտրոն։ Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ։

Ստեղծագործողների կենտրոն։ Մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարազարդում, երգ, պար և այլն։

Գրավոր աշխատանքի կենտրոն։ Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան։

Յուրաքանչյուր կենտրոնում աշխատանքի համար սովորողներին տրվում է որոշակի ժամանակ՝ կախված տեքստի ծավալից, սովորողների քանակից և

պատրաստվածությունից: Աշխատանքի ավարտին խմբերը միմյանց են ներկայացնում աշխատանքները:

Ուսումնական նյութը մատչելի դարձնելուն շատ են օգնում դիդակտիկ պարագաները և նյութերը՝ այն ամենը, ինչը ակադեմիական կրթությունը մոտեցնում է կյանքին:

Խմբային քննարկման օրինակ

Կներկայացնեմ **խմբային աշխատանքի** մեկ օրինակ, որը նպաստել է սովորողների լեզվամտածողության և սոցիալական ունակությունների զարգացմանը:

Խմբային աշխատանքը կատարվել է IV դասարանի II կիսամյակում <<Ես այսպե՛ս ասեմ, դու այնպե՛ս հասկացիր>>թեմայի ամփոփման ժամանակ:

Դասի նպատակները՝

- Վերհիշել ուսումնասիրած ստեղծագործությունների գաղափարը
- Ամրակայել առակի ժանրային առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքները
- Մասնակցել դերային խաղին
- Բեմականացնել հերոսների երկխոսությունը՝ վերաբերմունք դրսևորելով բնագրի հերոսների արարքների նկատմամբ
- Իրականացնել համատեղ աշխատանք՝ ներգրավելով խմբի բոլոր անդամներին

Անհրաժեշտ պարագաներ՝

- Յուրաքանչյուր խմբի սեղանին դրված իրենց խմբի անվանումը
- Կերպարներին համապատասխան հագուստներ
- Առակագիրների նկարներ

- Առակների դասագրքեր
- Աշակերտներին տրվել են հետևյալ հարցերը՝

-Ինչու՞ էր թեման կոչվում <<Ես այսպե՛ս ասեմ,դու այնպե՛ս հասկացիր>>:

-Ի՞նչ գիտեք առակի մասին,ինչպե՞ս է այն ստեղծվել:

-Ո՞վ էր, որ պատմությունը դարձրեց առակ:

-Եզոպոսը ինչպե՞ս օգնեց պատմությանը:

-Ուրիշ ի՞նչ հայտնի առակագիրներ գիտեք:

- Դասարանը բաժանվել է վեց խմբի, յուրաքանչյուր խմբում չորս աշակերտ:Խմբերի անվանումները առակների վերնագրերն են: Յուրաքանչյուր խումբ ներկայացրել է իր առակը,իսկ մյուս խմբերը պիտի մեկնաբանեին առակի իմաստը:

Դասարանում ներկայացրել են <<Վեճը>>, <<Ճպուռն ու մրջյունը>>, <<Առյուծն ու մուկը>>, <<Տակառի լողը>>, <<Այրի կինը և որդին>>, <<Շախմատ>> առակները: Աշակերտներին հանձնարավել էր, որ խմբով ներկայացնեն իրենց խմբի անվանը համապատասխանող առակը:

Առակները ներկայացնել աշակերտները կատարեցին դերերի բաշխում, ընտրեցին իրենց բնագրի հերոսներին համապատասխան հագուստները, դիմակները, որոնք կային դասարանում: Ուսուցչի հրահանգով աշակերտները չպիտի մոռանային ժամանակի մասին: Ժամանակը հստակ բաշխվում է և՛ պատրաստվելու, և՛ աշխատանքի ներկայացման համար:

Առակների ներկայացումից հետո աշակերտները խմբային քննարկման միջոցով ներկայացրին առած-ասացվածքներ: Գրատախտակի մի կողմում գունավոր թղթերով

փակցված էր առած-ասացվածքների սկիզբն, իսկ մյուս կողմում՝ ավարտը։ Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է 2 առած-ասացվածք։

Առած-ասացվածքների ամբողջացումը նպաստում է աշակերտների լեզվամտածողության զարգացմանը։

Առակների ամփոփման վերջին փուլում աշակերտներին տրվում է 5 բոպեանոց շարադրանք։ Շարադրանքը իրականացրել են հետևյալ հարցի շուրջ.

- Հերոսներից ու՞մ հետ կցանկանայիր ընկերանալ։ Հիմնավորի՛ր ընտրությունդ։

Խմբերի աշխատանքը ամփոփվում է ուսուցչի կողմից մեկ մտքի արտահայտմամբ, որ առակները ունեն այլաբանական իմաստ, առակները ունեն խրատական իմաստ։ Միշտ պետք է գտնել առակի դաստիարակչական կողմը։

Թեմայի ամփոփումը իրականացրել եմ հարց ու պատասխան մեթոդով։ Դասին մասնակցել են քիչ թվով աշակերտներ, ամփոփումը այնքան էլ մնայուն չի եղել աշակերտների մոտ։ Սակայն, երբ նույն թեմայի ամփոփումը իրականացրել եմ խմբային քննարկման միջոցով, ավելի արդյունավետ է եղել։

Սովորական քննարկման ժամանակ նյութի յուրացման աստիճանը /I փուլ/



Խմբային աշխատանքի արդյունքը / II փուլ/



Եզրակացություն

Իմ կողմից կատարված հետազոտությունից պարզ դարձավ, որ աշխատանքի արդյունավետության բարձրացմանը մեծապես նպաստում են խմբային քննարկումները։

Խմբերով քննարկումը ավելի նպատակահարմար է կիրառել թեմաների ամփոփման ժամանակ։ Քանի որ, երբ խումբը կատարում է քննարկում, մասնակցում են բոլորը, դրսևորում են պատասխանատվություն։

Խմբային քննարկումներին մասնակցում է դասարանում սովորող աշակերտների մեծամասնությունը։ Այդ ամենի վառ ապացույցն է հետազոտությունից հետո մեր ունեցած արդյունքները։ Ուսումնասիրությունը կատարվել է նույն թեման ամփոփելիս։ Խմբային քննարկումները զարգացնում են սովորողի.

- Համատեղ մտավոր աշխատանքը, որի ժամանակ քննարկումները դառնում են ուսուցման միջոց
- Կամքի ուժը՝ միասին ընդունած կանոններն ու որոշումները հարգելու համար,
- Համագործակցությունը
- Փաստարկներ բերելու, դրանք մեկնաբանելու, հիմնավորելու ունակությունը
- Այլոց նկատմամբ հարգանքը
- Խմբի մաս լինելու գիտակցումը և խմբի համար պատասխանատվությունը

Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է աշակերտների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա՝

- Միասին մտածելը
- Հարմարվելու ունակությունը
- Համագործակցությունը
- Փաստարկներ բերելու /համոզելու ունակությունը/

- Այլոց նկատմամբ հարգանքը, տարակարծության նկատմամբ հանդուրժողականությունը
- Խմբի մաս լինելու փորձը
- Ավելի բարձր ընդունակություններով աշակերտը կատարում է <<ուսուցչի>> դերը (ուսանում ուսուցանելու ընթացքում)։Սա բազմատարր կառուցվածք ունեցող զույգի տարբերակն է։

Օգտագործված գրականության ցանկ

1. <<ՈՒսուցման արդյունավետ հնարներ>>-Սերոբ Խաչատրյան 2020թ.
2. Ուսուցիչների վերապատրաստումների պլան և նյութեր-Երևան 2006
3. <<Լեզվի և մտածողության փոխհարաբերությունը տեքստում>>-Թադևոս Տոնոյան
4. Յու.Ա. Ամիրջանյան,Ա.Ս. Սահակյան-<<Մանկավարժություն>> ուսումնական ձեռնարկ
5. Ն.Հարությունյան,Ա.Ղազարյան-<<Սոցիալական մանկավարժություն>>, բուհական ձեռնարկ
6. https://dpir.mskh.am/hy/node/773
7. https://aravus.schoolsite.am/%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B9%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-2/
8. https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%BF%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80
9. https://hy.wiktionary.org/wiki/%D5%AC%D5%A5%D5%A6%D5%BE%D5%A1%D5%B4%D5%BF%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6